

**ԿԻԼԻԿԻԱՀԱՅՈՒԹՅԱՆ 1909 թ. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ  
ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՍԻՐԻԱԿԱՆ «ԱԼ-ԹԱԿԱՂՂՈՒՄ»  
ԹԵՐԹՈՒՄ**

1908 թ. հուլիսին Օսմանյան կայսրությունում երիտթուրքերի հեղաշրջման արդյունքում երկրում վերականգնվեց 1876 թ. սահմանադրությունը: Այդ փոփոխությունը ոգևորությամբ ընդունվեց կայսրության ոչ թուրք ժողովուրդների, այդ թվում՝ հայերի կողմից: Որդեգրելով պանթուրքիստական գաղափարախոսությունը՝ երիտթուրքերը, սակայն հանդես եկան որպես մոլի ազգայնամուլներ և թշնամական կեցվածք ընդունեցին կայսրության ոչ թուրք բնակչության նկատմամբ: Նման վարքագծի ամբողջ էությունը բացահայտվեց 1909 թ. ապրիլին Կիլիկիայում՝ մասնավորապես Ադանայում և նրա շրջակա գյուղերում կազմակերպված կոտորածների ընթացքում, որին զոհ գնաց շուրջ 30000 հայ<sup>1</sup>:

Կիլիկիայի կոտորածները լուսաբանվել է նաև արաբական մամուլում: Կոտորածներից հետո Եգիպտոսի քրիստոնեական մամուլը՝ մասնավորապես Ալեքսանդրիայում ամերիկյան միսիոներական քարոզչություն իրականացնող «Մուրշիդ» ամսագիրը, Կիլիկիայի ջարդերի մասին մի շարք հոդվածներ հրատարակեց: Դրանցում որպես ջարդերի գլխավոր պատճառ

<sup>1</sup> Թուրքական 1892 թ. պաշտոնական վիճակագրության համաձայն Կիլիկիայում հայերի թիվը շուրջ 150000 էր, իսկ Համբարձում Առաքելյանը Կիլիկիայի բնակչության թիվը 1896 թ. հաշվում էր 500000, իսկ հայության՝ 150000-200000 (տե՛ս Առաքելյան Հ., Ձեյթուն: Տեղեգրական, ազգագրական և վարչական պատմություն, Թիֆլիս, 1896, էջ 6-7): Ռ. Գասպարյանը Կիլիկիայում հայերի թիվը նշում է մոտ 400000, որից 22000-ը բնակվում էին Ադանա քաղաքում (տե՛ս Գասպարյան Ռ., Հայկական կոտորածները Կիլիկիայում, Երևան, 2005, էջ 55):

նշվում էր կրոնական գործունը: Սակայն Եգիպտոսի մուսուլմանական հասարակությունն անմիջապես հերքեց այն. մասնավորապես Ազհարի շեյխֆը Կիլիկիայի կոտորածների վերաբերյալ ֆեթվա (ուղերձ) հրապարակեց որտեղ նշվեց, որ իսլամը մեղավոր չէ քրիստոնյաների արյունահեղության մեջ: Եգիպտոսի չեզոք՝ մամուլի կողմից («Ալ-Ահրամ», «Ալ-Կահիրե», «Ալ-Ջարիդա», «Ալ-Աֆքար», «Ալ-Նար») երկու հատուկ թղթակիցներ ուղարկվեցին Ադանա՝ իրականությունը պարզելու համար: Ուսումնասիրությունն ավարտելուց հետո թղթակիցները նշում էին, որ կրոնական պատճառ չկար, գլխավոր պատճառն՝ Ադանայում առկա քաղաքական, տնտեսական ու հասարակական ոչ հայանպաստ գործոններն են<sup>2</sup>:

Կիլիկիայի հայության ջարդերի, պատճառների, դրան հաջորդած ամիսներին հայերի վիճակի, հայ որբերի խնդիրների և հայկական գաղթի լուսաբանմանն է անդրադարձել նաև սիրիական մամուլը՝ մասնավորապես Հալեպի «Ալ-Թակադդում»<sup>3</sup> (Առաջընթաց) թերթը: Թերթը սկզբում կոչվել է «Ալ-Հաուադիս Ալ-Ղախիլիա» (Ներքին իրադարձություններ), քանի որ հրապարակվում էին պետության ներքին գործերին վերաբերող

<sup>2</sup> Տե՛ս Մահմուդ Ռիֆաթ Ումամ, Ադանայի 1909 թ. կոտորածը և դրա արձագանքը եգիպտական մամուլում (արաբերեն), Կահիրե, 2010, էջ 2:

<sup>3</sup> 20-րդ դարի սկզբին Հալեպում տպագրվող ամենահայտնի թերթերից էր «Ալ-Թակադդումը», որը 1908 թ. օգոստոսից հրատարակվել է որպես քաղաքական շաբաթաթերթ: Թերթի գլխավոր խմբագիրը Շուքրի Քանիդոն էր: Այն լույս էր տեսնում շաբաթական երկու անգամ՝ երեքշաբթի և ուրբաթ օրերին, իսկ 1913 թ.՝ շաբաթական երեք անգամ: 1914 թ. կեսերին թերթը փակվեց և վերաբացվեց միայն 1919 թ. հունվարի 16-ին: Հրատարակվել է մինչև 1940-ական թթ.: Տեղեկությունների բազմազանությամբ թերթը գերազանցում էր սիրիական բոլոր թերթերին: Ազդեցիկ էր նաև Ղամասկոսում հրատարակվող «Ալ-Մուքթաբաս» թերթը: Այս երկու թերթերն աչքի էին ընկնում մանրագին ուսումնասիրություններով և դրանց հավուր պատշաճի ներկայացնելու կարողությամբ (տե՛ս Իլիաս Ժ., Սիրիական մամուլի զարգացումը վերջին հարյուր տարում (արաբերեն), Բեյրութ, 1983, մաս I, էջ 143):

տեղեկություններ: Արդեն 8-րդ համարից՝ 1908 թ. հոկտեմբերի 15-ից, այն անվանվել է «Ալ-Թակադդում»: Թերթը զովերգում էր ազատությունը, քննադատում բռնապետությունը, անօրինականությունը: Նրանում հրատարակվող տեղեկությունների մեջ կարևոր տեղ էին զբաղեցնում Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների՝ այդ թվում հայերի մասին հիշատակումները:

Փաստերի կեղծման ու խեղաթյուրման մոլուցքով բռնված երիտթուրքերը Կիլիկիայի ջարդերի զոհերի թվաքանակի մասին տալիս էին իրարամերժ տեղեկություններ: Զոհերի թվաքանակի մասին որոշակի տեղեկություն է տալիս «Ալ-Թակադդում» թերթի «Ադանայի դեպքերի հետազոտությունների արդյունքը» վերնագրով հոդվածը. «Ըստ ուսումնասիրող խմբի և պատերազմական գրասենյակի կատարած մանրամասն հետազոտությունների՝ Ադանայի իրադարձությունների արդյունքում զոհվեց 5680 մարդ, որից 1480-ը՝ մուսուլման, 4190-ը՝ քրիստոնյա: Իսկ ինչ վերաբերում է Ադանայում առկա օտարազգի զոհերի թվին, ապա անունների մատյաններում և գրապահոցներում բացակա լինելու կամ թերի գրանցված լինելու պատճառով թվերը մոտավոր են, նույնիսկ՝ խիստ սակավ, կարող են գերազանցել մինչև 15000-ը և ամբողջական թիվը կդառնա 20680»<sup>4</sup>: Թերթի մեկ այլ համարում նշվում էր, որ «Կիլիկիայի կոտորածների զոհերի թիվն անցնում է նույնիսկ 30000-ը»<sup>5</sup>:

«Ալ-Թակադդումը» հանգամանորեն անդրադառնում է Կիլիկիայի ջարդերի պատճառների ուսումնասիրմանը: Մասնավորապես թերթի 26-րդ համարում նշվում է, որ երբ բռնության ալիքը հասավ Ադանա, արյունահեղությունը միանգամից բոր-

<sup>4</sup> «Ալ-Թակադդում», Հալեպ, 1909, № 24:

<sup>5</sup> Նույն տեղում, № 5:

բոքվեց. «Կառավարությունն ի գորու էր կանխել սպանդը, սակայն հակառակ դրան ավելի բոբբոքեց այն, և սա եղավ այն գլխավոր պատճառը, որ այս կոտորածը նման տեսք ստացավ»<sup>6</sup>: 1865 թ. Օսմանյան կայսրությունում կատարված վարչական ռեֆորմների արդյունքում Կիլիկիայի պատմական տարածքները մտնում էին Ադանայի վիլայեթի մեջ, իսկ նրա փոքր մասն ընդգրկված էր Հալեպի վիլայեթի մեջ: 20-րդ դարի սկզբին Ադանայի վիլայեթը համարվում էր թուրքիայի համեմատաբար զարգացած շրջաններից մեկը, որտեղ կապիտալիստական արտադրանքային անհամեմատ ավելի արագ էր արմատավորում, քան կայսրության մյուս վայրերում: Հայերը կարևոր դեր էին կատարում նահանգի և ընդհանրապես Կիլիկիայի սոցիալ-տնտեսական զարգացման գործում՝ իրենց ձեռքում կենտրոնացնելով ներքին շուկայում ծավալվող առևտուրը, արդյունաբերական խոշոր ձեռնարկությունները և գյուղատնտեսական ապրանքների արտադրությունը:

Թերթը Կիլիկիայի ջարդերի գլխավոր պատճառներից նշում է նաև հայերի տնտեսական վիճակը: Բանն այն է, որ 1895–1896 թթ. ջարդերի ընթացքում կիլիկիահայերը կրել էին մարդկային և նյութական կորուստներ: Սակայն հետագա տարիներին հայերը ջանասիրության ու աշխատանքի շնորհիվ վերականգնել էին իրենց տնտեսությունները, լուրջ հաջողությունների հասել առևտրի և արհեստների բնագավառում: Թերթի հոդվածագիրը գրում էր. «Արդար քրտինքով ձեռք բերած տնտեսական աճն առաջացրել էր մահմեդական բնակիչների և իշխանությունների դժգոհությունը: Թուրքերը և քրդերը չէին կարողանում հանդուրժել, որ քրիստոնյան գտնվում է բարվոք

---

<sup>6</sup> Նույն տեղում, № 26:



վիճակում: Վերոնշյալ պատճառներն էին այն գլխավոր պայմանները, որոնք կոտորածների պատճառ հանդիսացան»<sup>7</sup>:

Կիլիկիայի ջարդերի մեջ չարաղետ դեր խաղաց Ադանայում հրատարակվող «Ալ-Իթիդալ» (Չափավորություն) թերթը: Այն հայատյաց հոդվածներ էր հրատարակում, որոնք Ադանայի ջարդերի երկրորդ ալիքի սկսման պատճառներից հանդիսացան<sup>8</sup>: Թերթի խմբագիր Իսսան Ֆիքրիի հոդվածներից որոշ քաղվածքներ լույս են տեսել «Ալ-Թակադդում» թերթի «Բաց գրություն մեծ վեզիրին» վերնագրով հոդվածում: Նրանցից մեկում Իսսանը նշում է. «Ես ի վիճակի եմ ծանրակշիռ ապացույցներ ներկայացնել, որ Ադանայի հայկական կոտորածը տեղի է ունեցել մեծ վեզիր Հուսեյն Հիլմի փաշայի գիտությամբ ու նրա հրամանով, և այն, ինչ գրել է «Ալ-Իթիդալ» թերթն ի վնաս հայերի՝ Ադանայի իշխանության հրամանով է եղել: Իսկ Ադանայի մուսուլման հարուստ աղաները մեղավոր չէին ճանաչում մուսուլմաններին, մինչդեռ կոտորածից հետո նրանցից մեկը վերադարձել է Կ. Պոլիս և իր մոտ եղել է 15000 լիրա գումար: Հիմնական փաստաթղթերը, որոնք ուղարկվել են կառավարությանն այս թեմայով, պահվում են ինձ մոտ, և անհրաժեշտության դեպքում ես կարող եմ ցուցադրել դրանք, ինչպես նաև ապացույցներ, որ բազմաթիվ պաշտոնյաներ մեծ գումարներ են ստացել այս դեպքի առնչությամբ»<sup>9</sup>: «Ալ-Իթիդալ» թերթի այս հոդվածները ևս մեկ անգամ ցույց են տալիս, որ Կիլիկիայի կոտորածները կազմակերպվել և իրականացվել են

---

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> 1909 թ. ապրիլի 7-ի համարը սովորականից ավել տպաքանակով լույս տեսավ և անվճար տարածվեց քաղաքում: Համարի էջերը լցված էին հակահայկական հոդվածներով ու նյութերով: Զարդի ողջ պատասխանատվությունը թերթը բարդում էր հայերի վրա (տե՛ս Սիմոնյան Հ., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում, Երևան, 2009, էջ 70–72):

<sup>9</sup> «Ալ-Թակադդում», 1909, № 52:

թուրքական իշխանությունների կողմից: Պետք է նշել, որ «Ալ-Թակադդումը» այս հարցում հետևողական չի եղել և տպագրել է իրարամերժ հոդվածներ: Մասնավորապես, թերթի «Ֆրանսիա և Թուրքիա» վերնագրով հոդվածում նշվում է, որ «1896 թ. ջարդերի և Ադանայի կոտորածի միջև կա տարբերություն: Եթե 1896 թ. ջարդերի ժամանակ կառավարությունը հենց ինքն էր անմիջական կազմակերպիչը, և Աբդուլ Համիդն օգտագործում էր ամեն տեսակի միջոց այն իրականացնելու համար, իսկ այստեղ այդպես չէ»<sup>10</sup>: Փաստորեն, հոդվածում ներկայացվում է Ադանայի կոտորածների պետական մակարդակով նախօրոք ծրագրված չլինելը, այնինչ իրականում ուժիորը կանխամտածված, ծրագրված գործողություն էր, որի նպատակը Կիլիկիան լիովին հայաթափելն էր, հայերի հողերին, բնակավայրերին, հարստություններին տիրանալը: Այն 19-րդ դարի վերջերին սկսված և մինչև 20-րդ դարի 20-ականների սկիզբը տևած Հայոց ցեղասպանության շղթայի մի փուլն է հանդիսանում:

Կոտորածներից անմիջապես հետո օսմանյան իշխանությունները մի քանի քննիչ հանձնաժողովներ ստեղծեցին, որոնց գործունեությունն իսկական պատուհաս եղավ հայերի համար<sup>11</sup>: Սկզբում այդ հանձնաժողովներին ներկայացված տեղեկությունների հիման վրա պատժվեցին որոշ մուսուլմաններ: Կոտորածի որոշ մեղսակիցների ձերբակալման մասին վկայում է նաև «Ալ-Թակադդում» թերթում տպագրված Ադանայի բնակիչներից մեկի գրությունը, որում տեղեկացվում էր քաղաքի բնակիչների, այդ թվում «Ալ-Իթիդալ» թերթի խմբագրի և գործերի նախկին հրամանատարի ձերբակալման մասին<sup>12</sup>: Անկողմնակալ երևալու կեղծ կեցվածքով մի պահ իշխանութ-

---

<sup>10</sup> Նույն տեղում, № 4:

<sup>11</sup> Տե՛ս Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 255–256:

<sup>12</sup> Տե՛ս «Ալ-Թակադդում», 1909, № 21:

յունները փակեցին «Ալ-Իթիզալ»-ը, սակայն իրականում թերթն անպատիժ մնաց. սոսկ ձևի համար փակվեց և վերահրատարակվեց իբրև օրաթերթ: «Ալ-Թակկադում»-ի «Անթալիայի դեպքեր» վերնագրով հոդվածում տեղեկացվում է քաղաքացիական դիվանի կողմից կոտորածը հրահրելու և նրանում մեծ մասնակցություն ունենալու մեջ մեղադրվող Կուսեյրի Ջադահա Աբդ ալ Սամդ Ալայի ձերբակալման մասին. «Քանտարկվել են Օմար, Ամին, Քաուրշուկ, Օսման բեյերը, որոնք թաքցրել են այն մարդկանց անունները, որոնք հարձակվել են պատսպարվող հայերի վրա և կոտորել նրանց»<sup>13</sup>:

Ուսումնասիրող հանձնաժողովների իրականացրած անարդար ձերբակալությունների մերկացմանն է ուղղված «Ալ-Թակկադում»-ի «Տեղական իրադարձություններ» վերնագրով հոդվածը: Այստեղ նշվում է, որ Հաճնի հայ կաթոլիկների հոգևոր առաջնորդներից մեկը շարունակում է բանտարկված մնալ Սարաշում, և հետաքննող հանձնաժողովները, փոխանակ ուսումնասիրելու սպանություններն ու դատապարտելու իսկական մեղավորներին, դաժանությամբ հարցաքննում են հայերին: «Ջեյթունցի մոտ 400 հայ սպանվել են Ադանայի արվարձաններում՝ թողնելով մեծ թվով այրիներ և որբեր: Իսկ Սուլեյմանյում հայերի հոգևոր առաջնորդը նամակ է ուղարկել Բ. Դաանը, որում խնդրում է ուշադրություն դարձնել Սուլեյմանյում հայ ազգի դժբախտություններին, և այս վիլայեթի վալի նշանակել այնպիսի մարդու, ով առավել հակված է առաջնորդվել սահմանադրության դրույթներով»<sup>14</sup>: Հոդվածում այնուհետև տեղեկացվում է, որ Ալեքսանդրիայում գտնվող Ադանայի հայերի հոգևոր առաջնորդ Մուշեղ եպիսկոպոսը հայկական թերթերից մեկում ներկայացրել է փաստեր, որոնք ապացուցում են

---

<sup>13</sup> Նույն տեղում:

<sup>14</sup> Նույն տեղում, № 23:

նախկին վալիի և Ադանայի պաշտոնյաների մասնակցությունը տեղի ունեցած հանցագործություններին<sup>15</sup>:

4. Պոլսի հայոց ազգային իշխանությունները, հայկական տարբեր կազմակերպությունների ղեկավարներ, մասնավոր անձինք կառավարության քննիչ հանձնախմբերի որոշումներն ապօրինի համարեցին ու բազմաթիվ հեռագրեր հղեցին սուլթանին, մեծ վեզիրին, խորհրդարանի նախագահին, ներքին գործերի նախարարին, որոնց լուսաբանմանը նույնպես անդրադարձել է «Ալ-Թակադդումը»:

«Ալ-Թակադդումը» մի քանի համարներում ներկայացնում է ողբերգությունից հետո Կիլիկիայում մնացած հայերի տխուր, անօգնական վիճակը: Մասնավորապես, ներկայացվում է Կիլիկիայի կաթողիկոսի՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքին ուղարկած նամակը, ուր պատրիարքը պահանջում էր մինչ ձմռան գալն անհապաղ միջոցառումներ իրականացնել ժողովրդի տառապանքը թեթևացնելու համար<sup>16</sup>: «Մարաշում հայերի վիճակը» հոդվածում ներկայացվում է տեղի հայերի առաջնորդի նամակը. «Մարաշում իրավիճակը շատ վատ է, և հայերը վախենում են, որ կոտորածները կարող են նորից կրկնվել»<sup>17</sup>:

Կիլիկիայի կոտորածներից հետո Ադանայում և Կիլիկիայի հայկական մյուս բնակավայրերում բազմաթիվ այրիներ և որբեր էին մնացել: «Ալ-Թակադդումը» մեծ տեղ է հատկացրել հայերի կրած նյութական կորուստների, անօթևան մնացած հայերի, որբերի, այրիների վիճակի նկարագրություններին: «Սգո հավաքույթ Ադանայում» վերնագրով հոդվածում հաղորդվում է, որ «պատրիարքարանը նամակ է ուղարկել Ադանայի եպիսկոպոսին, որում գրված էր, որ հրաժարվում է 600

---

<sup>15</sup> Նույն տեղում:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղում, № 50:

<sup>17</sup> Նույն տեղում, № 51:



ծնողագուրկ երեխաներին ուղարկել Ադանա»<sup>18</sup>: Իսկ «Հայերի պահանջները» վերնագրով հոդվածում էլ տեղեկացվում է, որ Կ. Պոլսում հայկական ֆինանսական խորհուրդը հատուկ նիստ է գումարել Ադանայում հայերի նյութական կորուստներն ուսումնասիրելու համար: Մտքերի փոխանակումից հետո խորհուրդը որոշել է նամակ ուղարկել սուլթանին: Նամակը պարունակում էր 3 սկզբունքային կետ.

1. Կառավարությունը պետք է իր բոլոր ջանքերը գործադրի ավերված հայկական եկեղեցիները վերակառուցելու համար:

2. Պարզաբանել հայ հոգևորականների կրած տառապանքները, բռնաճնշումները, հալածանքները:

3. Ուշադրություն դարձնել և լիակատար օժանդակություն ցուցաբերել անօգնական վիճակում հայտնված մարդկանց<sup>19</sup>:

Հայերի նյութական կորուստներն առիելի էին. թուրքերն ու քրդերը թալանել, կողոպտել, ավերել էին բնակելի տներ, խանութներ, եկեղեցիներ: Այս հարցի վերաբերյալ որոշակի տեղեկություն է պարունակում «Ադանայի դեպքերի հետազոտությունների արդյունքը» հոդվածը. «Իսկ ինչ վերաբերում է այրված կամ քանդված եկեղեցիների, տների ու խանութների թվին, ապա այն հասնում է 4823-ի, որից 4437-ը քրիստոնյաների, 386-ը՝ մուսուլմանների սեփականություն համարվող շենքեր: 30000 կանայք և երեխաներ, ովքեր ունեին սննդի, հագուստի և առաջին անհրաժեշտության իրերի կարիք, անօթևան մնացին»<sup>20</sup>:

Կիլիկիայի կոտորածներին առնչվող մյուս հոդվածներում թերթը ողջ ուշադրությունը կենտրոնացնում է կոտորածի

<sup>18</sup> Նույն տեղում, № 6:

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>20</sup> Նույն տեղում, № 24:

հետևանքով առաջացած հայկական գաղթի նկարագրություններին: «Հայերի գաղթը» վերնագրով հոդվածում նշվում է, որ Ամերիկայի, Եգիպտոսի հայ հարուստների մի խումբ հատկացրել է մեկ միլիոն լիրա Օսմանյան կայսրությունից դեպի օտար երկրներ՝ հատկապես Արգենտինա գաղթած հայերին օգնություն տրամադրելու համար<sup>21</sup>: «Իրավիճակն Ադանայում» հոդվածում տեղեկացվում է, որ 26000 հայ գտնվում է խղճուկ վիճակում և օգնության կարիք ունի: Նրանցից 6000 այրի են, իսկ Կուզանում 400 ընտանիք կացարան չունի: Նույն վիճակն է Քեսաբում (1000 ընտանիք), Դեորթ Յոլում (500 ընտանիք), Բադիջահում (800 ընտանիք): «Վերջին երեք ամիսներին ավելացել է մահացածների թիվը, շարունակվում է արտագաղթը, և մինչև օգոստոս ընկած ժամանակահատվածում 4000 մարդ արտագաղթել է դեպի արևմտյան պետություններ: Պատրիարքարանը Եգիպտոսից նամակ է ստացել Կահիրեում ու Ալեքսանդրիայում Ադանայից մոտ 900 գաղթական գտնվելու մասին, և նրանք չեն համարձակվում վերադառնալ Ադանա: Միաժամանակ իրավիճակն Ադանայում ավելի է վատթարանում. արդեն տարածվում են մի շարք հիվանդություններ, և անհրաժեշտ է անհապաղ հիվանդանոցներ կառուցել ու ժողովրդին օգնություն ցուցաբերել»<sup>22</sup>:

Պետք է նշել, որ Օսմանյան իշխանությունները, բացի մի խումբ մուսուլմանների «պատժելուց», որոշակի օգնություն՝ մոտ 20000 ոսկի, տրամադրեցին Կիլիկիայի բնակչությանը՝ նրանց կյանքը որոշակիորեն բարելավելու համար: Սակայն այդ գումարները բաշխվում էին անարդար. մեծ մասը հատկացվում էր սպանված մուսուլմանների ընտանիքներին: «Իրավիճակն Ադանայում» վերնագրով հոդվածում հաղորդ-

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղում, № 20:

<sup>22</sup> Նույն տեղում, № 29:

վում է, որ Ադանայում իրադրությունը չի բարելավվել, խոստացված բարենորոգումները չեն իրականացվել: Բանտարկված հայերը շարունակում են մնալ բանտերում՝ ենթարկվելով տարբեր տեսակի զրկանքների: Ադանայի նախկին վալի Ջևադ Բիքը և նախկին գորահրամանատար Մուստաֆա Ռեմզի փաշան, ովքեր մասնակցություն ունեն հայերի ողբերգության մեջ, անհոգ թափառում էին, «ինչ վերաբերում է քանդված, ավերված տներին, ապա հարյուրավոր տներ քանդված են մնում, իսկ հարյուրավոր մարդիկ՝ անօթևան»<sup>23</sup>: Մեկ այլ հոդվածում ասվում է, որ «հայերի գաղթը շարունակվում է, և չկա մի հուսադրող բան, որը հետ կանգնեցնի բնակիչներին հայրենիքը լքելու մտքից: Յուրաքանչյուր օր մեծ թվով հայ երիտասարդներ Մերսինից մեկնում են դեպի Ամերիկա»<sup>24</sup>: Թերթի 49-րդ համարում տեղ գտած հոդվածում ներկայացված է Կ. Պոլսի հայոց պատրիարքի այցը Իսթենդերուն, Անթալիա, Ադանա, ուր ամենուրեք բնակիչները բողոքում էին, որ օգնություն չեն ստացել: «Ամենածանր դրությունն Իսթենդերունում է, ուր օգնության տրամադրումը դադարեցվել է, և վիճակն ավելի է բարդացել», - նշում է հոդվածագիրը<sup>25</sup>:

Կիլիկիայի ջարդերի վերաբերյալ վերջին՝ «Հալեպի ու Ադանայի կոտորածների պատճառով բանտարկվածների համաներումը» վերնագրով հոդվածը «Ավ-Թակադդում» թերթում տպագրվել է 1910 թ. 209-րդ համարում, որում տեղեկացվում է Ադանայի և Հալեպի վիլայեթների կոտորածների կապակցությամբ պատերազմական դիվանի կողմից ցմահ կամ 15 տարվա

<sup>23</sup> Նույն տեղում, № 37:

<sup>24</sup> Նույն տեղում, № 47:

<sup>25</sup> Նույն տեղում, № 49:

ազատագրկման դատապարտված 36 անձանց համաներման մասին<sup>26</sup>:

Անփոփելիով՝ նշենք, որ 1909 թ. Կիլիկիայի հայերի կոտորածների առնչությամբ սիրիական «Ալ-Թակադդում» թերթում լույս տեսած հոդվածները կրկին վկայում են, որ կոտորածների հրահրման մեջ առաջնային դեր է խաղացել երիտթուրքական կառավարությունը: Թերթը տվյալներ է հաղորդում հայերի զոհերի քանակի վերաբերյալ, որոնք կարևոր են հայերի կոտորածների ընթացքում սպանվածների ընդհանուր թիվը ճշտելու համար: Պարբերականի տեղեկություններն օգտակար են նաև կոտորածների ժամանակ հայերի կրած նյութական վնասների հաշվարկման համար:

МЯСНИК ЕСОЯН

ОСВЕЩЕНИЕ ИСТРЕБЛЕНИЯ КИЛИКИЙСКИХ АРМЯН  
1909 Г. В СИРИЙСКОЙ ГАЗЕТЕ  
“АЛЬ-ТАКАДДУМ”

РЕЗЮМЕ

В результате истребления армян в Киликии в 1909 г. погибло около 30 тысяч армян. На эту трагедию обратила внимание сирийская газета “Аль-Такаддум” (Продвижение). В истреблении киликийских армян младотурецкие власти обвиняли самих армян: многочисленные невинные армяне были задержаны и брошены в тюрьмы. Истребление киликийских армян в 1909 г., безусловно, считается одним из этапов Геноцида армян, который начался в конце 19 века и продолжался до 20-ых годов XX века.

---

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղում, 1910, № 209:



**ELUCIDATION OF THE EXTERMINATION OF  
CILICIAN ARMENIANS IN 1909 IN THE SYRIAN  
NEWSPAPER "AL-TAKKADUM"**

**SUMMARY**

As a result of the Armenians' massacres in Cilicia in 1909 about 30. 000 Armenians were killed.

The extermination of Cilician Armenians in 1909 is considered as a stage of the Armenian Genocide which started at the end of the 19<sup>th</sup> c. until the 20-s of the 20<sup>th</sup> c.